

IV. Ուսանողի կրթական գործառույթների գնահատումը

26. Համալսարանի ուսանողների կրթական գործառույթների գնահատման նպատակն է.

- ա) գիտելիքների համակարգված և անընդհատ ստուգման միջոցով՝ խթանել ուսանողների նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացները՝ հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները,
- բ) բարելավել ուսանողի մասնակցությունը դասընթացներին,
- գ) դասախոսների համար ապահովել արդյունավետ հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման համար,
- դ) բարձրացնել դասընթացների գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը:

27. Ուսանողի կրթական գործառույթները յուրաքանչյուր առարկայի համար գնահատվում են դասավանդող դասախոսի կողմից՝ բազմաբաղադրիչ համակարգի կիրառմամբ:

28. Առարկայի ընդհանուր միավորը և գնահատականը գրանցվում է քննական տեղեկագրում և ուսանողի ստուգարքային գրքույկում՝ բանավոր քննության դեպքում՝ քննության օրը, ուսանողի պատասխանից անմիջապես հետո, իսկ գրավոր քննության դեպքում՝ գրավոր աշխատանքը գնահատելուց հետո:

29. Ուսանողի կրթական գործառույթների գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ ներքոհիշյալ աղյուսակի.

Միավորը	Գնահատականը
18-20	5 (գերազանց)
14-17	4 (լավ)
8-13	3 (բավարար)
0-7	2 (անբավարար)
Ստուգարքներ	
8-20	Ստուգված
0-7	Չստուգված

30. Առարկայի ընդհանուր միավորը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Գ_{ընդհ.} = Գ_{մասն.} + Գ_{ընթ.} + Գ_{եզր.}, \text{ որտեղ.}$$

$Գ_{մասն.}$ – ուսանողների՝ դասընթացի մասնակցության գնահատումն է (առավելագույնը՝ 4 միավոր),

$Գ_{ընթ.}$ – ուսանողների ընթացիկ գնահատումն է՝ ընթացիկ քննությունների և/կամ առաջադրանքների միջոցով (առավելագույնը՝ 6 միավոր),

Գ_{եզր.} – ուսանողների եզրափակիչ գնահատումն է՝ վերջնական քննության կամ ստուգարքի միջոցով (առավելագույնը՝ 10 միավոր): (Հավելված 1)

Օրինակ 1.

Եթե ուսանողի՝ դասընթացի մասնակցությունը գնահատվել է 3 միավոր, դասընթացի համար նախատեսված ընթացիկ քննությունը և/կամ առաջադրանքը՝ 5 միավոր, իսկ եզրափակիչ քննությունը՝ 10 միավոր, ապա այդ դասընթացի ընդհանուր միավորը կլինի.

$$Գ_{ընդհ.} = Գ_{մասն.} + Գ_{ընթ.} + Գ_{եզր.} = 3 + 5 + 10 = 18$$

31. Ուսանողների՝ դասընթացի մասնակցության աստիճանը հաշվարկվում է հետևյալ բանաձևով .

$$Գ_{մասն.} = ((L_{սար.ժ.} - F_{աց.անհ.} - F_{աց.հ.}) / (L_{սար.ժ.} - F_{աց.հ.}) \times 100\%, \text{ որտեղ.}$$

Գ_{մասն.} - դասընթացի մասնակցության աստիճանն է,

L_{սար.ժ.} - լսարանային ժամերի քանակն է,

F_{աց.հ.} - հարգելի բացակաների քանակն է,

F_{աց.անհ.} - անհարգելի բացակաների քանակն է:

Դասընթացի՝ ուսանողի մասնակցության՝ Գ_{մասն.} միավորը որոշվում է ներքոհիշյալ աղյուսակում բերված սանդղակի չափանիշների համապատասխան՝

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
90% և բարձր	4
80-89%	3
65-79%	2
50-64%	1
50%-ից ցածր	0

Օրինակ 2.

Եթե 32 լսարանային ժամ ունեցող դասընթացից ուսանողն ունի 10 ժամ անհարգելի և 0 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացի մասնակցության աստիճանը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$((32-10)/32) \times 100\% = 69\%$$

Քանի որ 69% ներկայությունը 65-79% միջակայքում է, ուսանողին՝ դասընթացի մասնակցության համար հատկացվում է 2 միավոր՝ Գ_{մասն.} = 2 միավոր:

Օրինակ 3.

Եթե 32 լսարանային ժամ ունեցող դասընթացից ուսանողն ունի 5 ժամ անհարգելի և 2 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացի մասնակցության աստիճանը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$((32-5-2)/(32-2)) \times 100\% = 83\%:$$

Քանի որ 83% ներկայությունը 77-89% միջակայքում է, ուսանողին դասընթացի մասնակցության համար հատկացվում է 3 միավոր՝ $Q_{մասն.} = 3$ միավոր:

32. Ուսանողի՝ դասընթացի մասնակցության գնահատումն իրականացվում է մշտադիտարկման արդյունքներով: Մշտադիտարկումն իրականացվում է դասախոսների, ամբիոնների, ֆակուլտետների, ուսումնական մասի միջոցով՝ հետևյալ կարգով.

- ա) Ակադեմիական խմբի ավագը ուսանողի՝ դասընթացից բացակայելու վերաբերյալ իր ստորագրությամբ հաստատված, նշումներ է կատարում ակադեմիական խմբի մատյանում:
- բ) Դասախոսն իր ստորագրությամբ հաստատում է ակադեմիական խմբի ավագի կողմից ուսանողների՝ դասընթացից բացակայելու վերաբերյալ մատյանում կատարված նշումները:
- գ) Խմբի դասերին կոլեկտիվ չհաճախելու դեպքում դասախոսն այդ մասին հայտնում է ֆակուլտետի դեկանատ և ակադեմիական խմբի մատյանում կատարում համապատասխան նշում:
- դ) Ուսանողների՝ դասընթացի մասնակցության աստիճանը հաշվարկվում և դրան համապատասխանող միավորը սահմանվում է դեկանատի կողմից՝ եզրափակիչ քննությունից առաջ և նշվում է քննական տեղեկագրում:

33. Ընթացիկ գնահատումը ($Q_{ընթ.}$) միջանկյալ քննությունների և/կամ առաջադրանքների միջոցով ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատումն է, որի համար սահմանված է առավելագույնը 6 միավոր:

Առարկայի ընթացիկ գնահատման ձևը նկարագրվում է առարկայական ծրագրում և ընտրվում է դասախոսի հայեցողությամբ՝ հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները: Այն կարող է ներառել.

- պարտադիր գրավոր միջանկյալ քննություն,
- թեստային գրավոր առաջադրանքներ,
- թիմային և անհատական առաջադրանքների իրականացում և ներկայացում,
- հաշվեգրաֆիկական աշխատանքներ (խնդիրների լուծում),
- լաբորատոր աշխատանքներ (փորձարկումների իրականացում),

- այլ ձևեր, որոնք պահանջում են համապատասխան հիմնավորում և թույլտվություն ֆակուլտետի խորհրդի կողմից:

34. Ընթացիկ գնահատման միավորը դասախոսի կողմից նշվում է քննական տեղեկագրում՝ մինչև քննաշրջանի սկիզբը (Հավելված 2):

35. Եզրափակիչ գնահատումը ($Q_{եզր.}$) լրիվ դասընթացն ընդգրկող եզրափակիչ քննության և/կամ ստուգարքի միջոցով ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատումն է, որի համար սահմանված է առավելագույնը 10 միավոր:

Եզրափակիչ քննությունը կամ ստուգարքը հիմնականում անցկացվում է գրավոր, իսկ որոշ դեպքերում նաև բանավոր՝ ելնելով առարկայի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության բանավոր անցկացումն իրականացվում է համապատասխան հիմնավորմամբ և ֆակուլտետի խորհրդի թույլտվությամբ:

36. Եզրափակիչ քննության արդյունքները ($Q_{եզր.}$) դասախոսի կողմից լրացվում են քննական տեղեկագրում, որում նախապես նշված է ուսանողների՝ դասընթացի մասնակցության միավորը ($Q_{մասն.}$) և ընթացիկ գնահատման միավորը ($Q_{ընթ.}$):

37. Հաշվեգրաֆիկական և լաբորատոր աշխատանքներ պարունակող առարկաների դեպքում ուսանողը կարող է մասնակցել եզրափակիչ քննությանը, եթե կատարել է տվյալ ամբիոնի կողմից՝ հաշվեգրաֆիկական և լաբորատոր աշխատանքների համար սահմանված, նվազագույն պահանջները: Հաշվեգրաֆիկական և լաբորատոր աշխատանքները կարող են դիտարկվել որպես ընթացիկ գնահատման միջոց: Այս առարկաների համար ընթացիկ գնահատումը՝ հաշվեգրաֆիկական և լաբորատոր աշխատանքների գնահատումից բացի, անհրաժեշտության դեպքում, կարող է ներառել նաև գնահատման այլ եղանակներ (տես կետ 33):

38. Կուրսային նախագծերի և կուրսային աշխատանքների ընթացիկ գնահատումն ($Q_{ընթ.}$) իրականացվում է ուսումնական կիսամյակի 8-րդ շաբաթվա ավարտից հետո, և գնահատվում է ուսանողի կատարած աշխատանքի որակը, ծավալը (ընդհանուրի 50%) մասնակցությունը, առաջընթացը և կազմում է առավելագույնը 10 միավոր՝ $Q_{ընթ.} = 10$ միավոր: Կուրսային նախագծի/աշխատանքի ամբողջ ծավալով կատարումը պարտադիր է, քանի որ ուսանողը կուրսային նախագծի/աշխատանքի միայն ամբողջական կատարման դեպքում կարող է ստանալ ընդհանուր դրական միավոր և մասնակցել կուրսային նախագծի/աշխատանքի եզրափակիչ գնահատմանը: Կուրսային նախագծի/աշխատանքի եզրափակիչ գնահատումն իրականացվում է մինչև քննաշրջանի սկիզբը և կազմում է առավելագույնը 10 միավոր՝ $Q_{եզր.} = 10$ միավոր: (Հավելված 3)

39. Ուսումնական և արտադրական պրակտիկաները գնահատվում են հաստատված ծրագրի համապատասխան կազմված հաշվետվություններով, պրակտիկայի ղեկավարի կողմից՝ պրակտիկայի վերջին օրը՝ եզրափակիչ գնահատման հիման վրա՝ առավելագույնը 20 միավոր:

$$G_{\text{ընդհ.}} = G_{\text{եզր.}}$$

40. Առարկայի քննական տեղեկագրում և ուսանողի ստուգարքային գրքույկում նշվում է ուսանողի ստացած ընդհանուր գնահատականը ($G_{\text{ընդհ.}}$) որը հաշվարկվում է կետ 31-ում նշված բանաձևով:

$$G_{\text{ընդհ.}} = G_{\text{մասն.}} + G_{\text{ընթ.}} + G_{\text{եզր.}}$$

41. Այն առարկաների համար, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր ընդհանուր միավոր և գնահատվել է անբավարար կամ չստուգված, կրեդիտներ չեն տրվում:

42. Վերականգնվող կամ մի մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն տեղափոխվող ուսանողը հանձնում է միայն եզրափակիչ քննություն, որի համար սահմանված է առավելագույնը 20 միավոր:

43. Ուսանողը կարող է տվյալ դասընթացի գնահատականը բողոքարկել սույն կարգի V բաժնում սահմանված պայմանների համապատասխան:

44. Գնահատականը բարձրացնելու նպատակով ուսանողը քննությունը կարող է վերահանձնել գրավոր դիմումի համաձայն՝ համալսարանի ռեկտորի թույլտվությամբ:

- Բակալավրիատի առաջին և երկրորդ կուրսերում ստացած գնահատականները բարձրացնելու ցանկություն ունեցող ուսանողը կարող է թվով ոչ ավելի քան երկու դասընթացից կատարել վերահանձնում: Առաջին կուրսում ստացած գնահատականները թույլատրվում է վերահանձնել երկրորդ կուրսում փոխատեղման (ռոտացիա) ավարտից հետո, իսկ երկրորդ կուրսում ստացած գնահատականը՝ երրորդ կուրսում փոխատեղման (ռոտացիա) ավարտից հետո:
- Մագիստրատուրայում սովորող ուսանողի ստացած գնահատականները վերահանձնման ենթակա չեն:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ¹**

201_ /201_ ուս. տարվա __ կիսամյակ ___ կուրս

Ֆակուլտետ՝

Խումբ՝

Առարկա՝

Դասախոս՝

Ուժի մեջ է մինչև ” _____ ” 201 թ.

<i>Գնահատական</i>	<i>Միավոր</i>
Գերազանց /5/	18-20
Լավ /4/	14-17
Բավարար /3/	8-13
Անբավարար	< 8
Չներկայացած	Չներկայացած

Հ/Հ	<i>Ուսանողի Ազգանուն, Անուն, Հայրանուն</i>	<i>Ընթացիկ գնահատման միավոր</i>	<i>Դասընթացի մասնակցության միավոր</i>	<i>Եզրափակիչ գնահատման միավոր</i>	<i>Քննական միավոր 0-20</i>	<i>Գնահատական 2-5</i>	<i>Ամբիոնի վարիչի կամ Դասախոսի ստորագրություն</i>
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							
7.							
8.							
9.							

Ֆակուլտետի ղեկավար՝

Ամբիոնի վարիչ՝

¹ Ընթացիկ գնահատման միավորը և դասընթացի մասնակցության միավորը լրացվում է ղեկնատի կողմից:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

201_ /201_ ուս. տարվա __ կիսամյակ ___ կուրս

Ֆակուլտետ՝

Խումբ՝

Առարկա՝

Դասախոս՝

Ուժի մեջ է մինչև ” _____ ” 201 թ.

Գնահատական	Միավոր
Գերազանց /5/	18-20
Լավ /4/	14-17
Բավարար /3/	8-13
Անբավարար	< 8
Չներկայացած	Չներկայացած

Հ/Հ	Ուսանողի Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ընթացիկ գնահատման միավոր	Եզրափակիչ գնահատման միավոր	Քննական միավոր 0-20	Գնահատական 2-5	Ամբիոնի վարիչի կամ Դասախոսի ստորագրություն
10.						
11.						
12.						
13.						
14.						
15.						
16.						
17.						
18.						

Ֆակուլտետի ղեկավար՝

Ամբիոնի վարիչ՝

